Ս. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԻՐԱՆՈՒՄ XIX Դ. ՎԵՐՋԻՆ XX Դ. ՍԿԶԲԻՆ

XVII դ. սկզբից սկսած հայ վաճառականությունն ակտիվ դեր է խաղացել Իրանի այս կամ այն շրջանի տնտեսական կյանքում։ Մինչև XVIII դ. առաջին քառորդը Իրանի արտաքին առևտրում վճռորոշ դիրքեր էին գրավում Նոր Ջուղայի հայ վաճառականները։ XVIII դ. վերջին XIX դ. սկզբին նրանք ակտիվ գեր էին խաղում Իրանական Ադրբեջանի՝ մասնավորապես Թավրիզի, ինչպես նաև Մերձկասպյան շրջանների՝ Գիլանի և Մազանդարանի առևտրում։

XIX դ. սկզբից սկսած հայ վաճառականները լայն գործունեություն էին ծավալել նաև Հյուսիս-արևելյան Իրանում, սակայն առևտրական այդ գործունեությունը մինչև այժմ չի գրավել ուսումնասիրողների ուշադրությունը։ Ներկա աշխատանքը կոչված է հնարավորության սահմաններում լրացնել այդ բացը և ի մի բերել XIX դ. վերջին XX դ. սկզբին Հյուսիս-արևելյան Իրանում հայ վաճառականության գործունեությանը վերաբերվող բազմաբնույթ փաստերը։

Հայ վաճառականության վերակողմնորոշումը դեպի Հյուսիս-արևելյան Իրան ուներ որոշակի պատճառներ։ Նոր Ջուղայի հայկական գաղութն այս շրջանում տնտեսական անկում էր ապրում։ Իրանական Ադրբեջանում, Գիլանում, Մազանդարանում ակտիվորեն գործող հայ վաճառականությունն ավելի ու ավելի մեծ չափով էր զգում օտարերկրյա առևտրական տների, ինչպես նաև իրանցի առևտրականների աճող մրցակցությունը։ Դա ստիպում էր հայ վաճառականներին վերահարմարվել իրանական շուկայի փոփոխված պայմաններին և փընտրել այնպիսի շուկաներ, որտեղ այդ մրցակցությունն ավելի թույլ էր։ Նման շուկա հանդիսացավ Հյուսիս-արևելյան Իրանը (Աստրաբադ, Շահրուդ-Բաստամ, Խորասան)։ Ի տարբերություն Իրանական Ադրբեջանի, Գիլանի, Մազանդարանի և Իրանի հարավային շրջանների, Հյու-

արևելյան Իրանն իր աշխարհագրական դիրքի, առևտրական հարմար ճանապարհների և հզոր առևտրական կապիտալի բացակայության պատճառով շատ թույլ էր կապված Արևմտյան Եվրոպայի հետ։ Միակ հարմար առևտրական ուղին Բանդար Գյաղ-Շահրուդ-Նիշաբուր-Մեշհեդ ճանապարհն էր, որն էլ մի քանի տասնամյակ շարունակ հանդիսանում էր Հյուսիս-արևելյան Իրանն արտաքին աշխարհի հետ կապող միակ քիչ թե շատ հարմար ուղին։

Հենց այդ ուղին էլ ընտրեցին հայ վաճառականները, որոնց ներթափանցումը Հյուսիս-արևելյան Իրան այնքան արագ էր ընթանում, որ արդեն «...XIX դ. կեսին հայ վաճառականներն սկսեցին իրենց մենաշնորհը դարձնել մեծածախ առևտուրը Իրանի հյուսիս-արևելքում, օրինակ Շահրուդ-Բաստամում, որտեղ հնդկական, արևմտաեվրոպական և ռուսական ապրանքներով առևտուրը գտնվում էր նրանց ձեռքում»[1]։

XIX դ. երկրորդ կեսին Իրանն ավելի ու ավելի էր ներքաշվում համաշխարհային կապիտալիստական շուկայի ոլորտ, ավելացնելով գյուղատնտեսական ապրանքների արտահանումը և արդյունաբերական ապրանքների ներմուծումը։ Այդ գործընթացը, բնականաբար, դիպավ նաև Հյուսիս-արևելյան Իրանին։ Բանդար Գյաղ-Շահրուդ-Սարզեվար-Նիշաբուր-Մեշհեդ առևտրական ուղին աստիճանաբար դարձավ Իրանի ամենաաշխույժ առևտրական ուղիներից մեկը, որի ամբողջ երկարությամբ, առևտրական խոշոր կենտրոններում հաստատվեցին հայկական խոշոր առևտրական ընկերությունների ներկայացուցիչները։ Օրինակ 70-ական թվականներին Բանդար Գյաղում նշանակալի առևտուր էին վարում Արտեմիա Ադամովը, Առաքել Շատուրովը, Ներսես Կրասիլնիկովը, Գևորգ Աբիևը և ուրիշներ[2]։

Շահրուդում ևս հաստատվել էին Ադամովների և Կրասիլնիկովների խոշոր առևտրական ընկերությունների ներկայացուցիչները[3]։

Նրանց մի մասը, Իրանի պայմաններում, վարում էր նշանակալի առևտուր։ Բաքվի մաքսատան տվյալներով Ներսես Կրասիլնիկովը 1869 թ. միայն Բաքվի վրայով Իրանից Ռուսաստան էր արտահանել 49.725 ռուբլու ապրանք և 3239 ռուբլու դրամ[4], միևնույն ժամանակ Իրան ներմուծելով 21.185 ռուբլու ապրանք և 29.475 ռուբլու դրամ[5]։ Բացի այդ, նա Աստարայի վրայով Իրան էր ներմուծել ևս 15.100 ռուբլու ապրանք[6]։

Նույն թվականին Առաքել Շատուրովը Բաքվի վրայով Ռուսաստան էր արտահանել 6.050 ռուբլու ապրանք և Իրան ներմուծել 20.955 ռուբլու ապրանք և 5.550 ռուբլու դրամ[7]։

Օգորոդնիկովի վկայությամբ Սարգևարում գործող հայ առևտրական ընկերություններից ամենանշանավորը Ադամովների ընկերությունն էր, որի ներկայացուցիչ Ներսես Տեր-Մովսեսովի առևտրական գործարքները գերազանցում էին Սարգևարի մյուս բոլոր հայ վաճառականների առևտրական գործարքները միասին վերցրած[8]։

Հայ վաճառականների և ռուս Բաումգարտենի ջանքերով Շահրուդի և Բանդար Գյազի միջև հաստատվել էր նույնիսկ կանոնավոր հաղորդակցություն, որը հեղինակն անվանում է «հայկական փոստ»[9]։

Մինչև անդրկովկասյան առևտրական ուղու փակումը 1883 թ., հայ վաճառականները զգալի չափով կողմնորոշվում էին դեպի արևմտաեվրոպական արտադրություն, Հյուսիս-արևելյան Իրան ներմուծելով հիմնականում Մարսելի շաքար, բնաճարպամոմեր և այլ ապրանքներ։ Միաժամանակ նրանք Արևմտյան Եվրոպա էին արտահանում զգալի քանակությամբ բուրդ և մետաքսահումք։ Սակայն հարկ է նշել, որ հայ վաճառականները, չնչին բացառությամբ, անմիջական կապերի մեջ չէին Արևմտյան Եվրոպայի և Կոստանդնուպոլսի հետ և շաքարը, բնաճարպամոմերը և մյուս եվրոպական ապրանքները գնում էին երկրորդ ձեռքից՝ հիմնականում Թիֆլիսում։

XIX դ. 80-ական թվականների կեսերից Հյուսիս-արևելյան Իրանում գործող հայ վաճառականները շրջադարձ են կատարում դեպի ռուսական արդյունաբերություն, որը պայմանավորված էր օբյեկտիվ հանգամանքներով։ Միջին Ասիայի միացումից հետո ցարական կառավարությունը տերիտորիալ նվաճումների քաղաքականությունից անցավ տնտեսական ներթափանցման քաղաքականության, որն ուղեկցվում էր պրոտեկցիոնիստական միջոցառումներով։ Ձգտելով նպաստել ռուսական արդյունաբերական ապրանքների ներթափանցմանը Արևելքի երկրներ, այդ թվում նաև Իրան, ցարական կառավարությունը 1883 թ. փակեց անդրկովկասյան տարանցիկ ուղին։ Դա նկատելի հարված հասցրեց արևմտաեվրոպական առևտրին հատկապես Հյուսիս-արևելյան Իրանում, որի համար այդ ուղին արևմտաեվրոպական արդյունաբերական ապրանքների ներթափանցման միակ հարմար ուղին էր։ Այժմ արդեն եվրոպական երկրների առևտուրը Հյուսիս-արևելյան Իրանի հետ կարող էր զարգանալ կամ Տրապիզոն-Թավրիզ ուղիով, կամ Պարսից ծոցի, և կամ Հնդկաստանի և անգլիական Բելուջիստանի վրայով, որը կապված էր բազմաթիվ դժվարությունների հետ։

Միևնույն ժամանակ ցարական կառավարությունը սկսեց խրախուսադրում վճարել Իրան արտահանվող ռուսական շաքարի և մանուֆակ-

տուբայի համար (խրախուսադրամ վճարվում էր միայն ռուսահպատակ վաճառականներին)։

Արխիվային տվյալների և բազմաթիվ հեղինակների վկայությամբ Հյուսիս-արևելյան Իրանում Ռուսաստանի հետ ողջ առևտուրը գտնվում էր հիմնականում հայ վաճառականների ձեռքում: Շահրուդում, օրինակ, 7 ռուսահպատակ հայ վաճառականների առևտրական ընդհանուր շրջանառությունը 1884 թ. կազմում էր 1.596.550 ռուբլի[10]։ Նրանք Ռուսաստանից Շահրուդ էին ներմուծում հիմնականում շաքար, երկաթ, չուգուն, պողպատ, չիթ, իսկ Շահրուդից և նրա շրջակայքից արտահանում էին բամբակ, բուրդ, չոր միրգ և մետաքսահումք։

Ընդհանրապես շաքարի, երկաթի, չուգունի և մի շարք այլ ապրանքների ներմուծման մեջ հայ վաճառականների տեսակարար կշիռը բավականին մեծ էր։ 1891 թ. Շահրուդ ներմուծված 26.000 փութ (մոտ 400.000 ռուբլու) երկաթից 21.000 փութը ներմուծել էին Դավիթ Գրիգորյանցի, Ալեքսանդր Օսիպովի և Խաղար Թամրիզովի առևտրական գրասենյակները և միայն 5.000 փութը՝ պարսիկ վաճառականները[11]։

Նույն թվականին Բանդար Գյազի վրայով Շահրուդ էր ներմուծվել 35.000 փութ շաքար (120.000 ռուբլու), որից 20.000 փութը ներմուծել են վերոհիշյալ վաճառականները և Փանյանցը[12]։

Սակայն Հյուսիս-արևելյան Իրանում գործող հայ վաճառականության հիմնական կենտրոնը Սաբզևարն էր։ Բաումգարտենը, որը լավատեղյակ էր Խորասանի տնտեսական կյանքին, նշում է, որ 19-րդ դարի վերջին Սաբզևարում գործում էին հայկական 11 առևտրական ընկերություններ, որոնցից 4-ը խոշոր էին[13]։ Դրանց թվում էին այնպիսի խոշոր առևտրական տներ և ընկերություններ, ինչպիսիք էին Թումանյանցները, «Ղուլյանց, Տեր-Մկրտիչ և Ընկ.», «Տեր-Պետրոսյանց, Նասիբյանց և Ընկ.», Մնացականով եղբայրները և ուրիշներ։

Արտամոնովը ևս նշում է, որ Սաբզևարում գործող 14 խոշոր առևտրական գրասենյակներից 10-ը հայկական էին, որոնցից 9-ի տերերը ռուսահպատակ էին, իսկ մեկի տերը՝ (Թումանյանց) պարսկահպատակ[14]։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Խորասանի երկրորդ առևտրական կենտրոնի՝ Սաբզևարի արտահանման և ներմուծման մոտավորապես կեսը գտնվում էր հայ վաճառականների ձեռքում։ Նրանց տեսակարար կշիռը հատկապես մեծ էր արտահանման այնպիսի ճյուղերում, ինչպիսիք էին բամբակը, բուրդը, չոր միրգը։ Սաբզևարում բնակվող 7 ռուսահպատակ հայ վաճառականները (Հախնազարյանց,

Քարամյանց, «Ղուլյանց և Ընկ.» ընկերության գործակատար Գևորգյանց, Տեր-Ղազարով, Մնացականյանց, Ստեփանյանց, Ղարիբյանց) 1892 թ. Սարղևարից Ռուսաստան էին արտահանել 67.500 փութ բամբակ, 65.000 փութ բուրդ, 15.000 փութ չոր միրգ՝ ընդհանուր առմամբ 147.000 փութ 2.360.000 զուան գումարով[15]։ Դա կազմում էր Սարգևարի ողջ արտահանման մոտավորապես 55%։ Միևնույն ժամանակ նրանք Ռուսաստանից Սարղևար էին ներմուծել մոտավորապես նույն գումարի կտորեղեն, շաքար, շաքարավազ, երկաթ և այլ իրեր, որը կազմում էր ամբողջ ներմուծման մոտ 45%[16]։

Իրանի տնտեսական կյանքին լավատեղյակ Քերզոնի վկայությամբ հայ վաճառականները Սարգևարից Ռուսաստան էին արտահանում տարեկան 10—12 հազար հակ (1 հակը մոտավորապես հավասար է 5 փթի) բուրդ, որի զգալի մասն այնուհետև առաքվում էր Անգլիա[17]։

Հայ վաճառականների ձեռքում էր գտնվում նաև Հյուսիս-արևելյան Իրանի մյուս խոշոր քաղաքների և բնակավայրերի առևտուրը։ Նիշաբուրում զգալի առևտուր էին վարում երկու խոշոր առևտրական տների՝ Թումանյանցների և Տեր-Մկրտիչև եղբայրների ներկայացուցիչները։ Բոջնուրդում լայն գործունեություն էին ծավալել Տեր-Մկրտիչև և Արոնով առևտրական ընկերությունների ներկայացուցիչները, որոնցից առաջինի տարեկան առևտրական շրջանառությունը հասնում էր 150.000 ռուբլու, իսկ երկրորդինը՝ 200.000 ռուբլու[18]։

Դամղանում միակ ռուսահպատակ վաճառականը Կարապետյանց առևտրական ընկերության ներկայացուցիչն էր[19]։

Ռուս զինվորական Բենդերևի վկայությամբ Բանդար Գյազում գործում էին ռուսահպատակ հայերի 10 առևտրական ընկերություններ 1.700.000 ռուբ. տարեկան առևտրական շրջանառությամբ, չհաշված պարսկահպատակ Թումանյանցներին, որոնց առևտրական շրջանառությունն անցնում էր 200.000 ռուբլուց[20]։

Մեծ թվով հայ վաճառականներ էին ապրում թուրքմենական ցեղերի շրջանում։ Նրանք կարողանում էին շահել քոչվորների համակրանքը և մեն մենակ շրջել թուրքմենական աուլներում։ Օրինակ. գոկլանների Բայանդիր տոհմի շրջանում ապրում էին 4 հայ վաճառականներ, որոնք խոշոր եղջերավոր անասուններ էին գնում Մերձ-կասպյան մարզի զորքերին մատակարարելու համար։ Նրանք համընդհանուր հարգանք էին վայելում քոչվոր գոկլանների շրջանում, որոնք պաշտպանում էին հայերին, ինչպես հարազատ մարդու։ 1891 թ. հայ վաճառականները գոկլաններից և Բոջնուրդյան խանության բնակ-

չությունից գնել և Ռուսաստան էին քշել ընդհանուր առմամբ մոտ 1000 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ և 7—8 հազար գլուխ ոչխար[21]։

Հնարավոր դժվար է խոսել հայ վաճառականների խիստ մասնագիտացման մասին։ Նրանք բոլորն էլ զբաղվում էին և արտահանմամբ, և ներմուծմամբ։ Լավ տեղյակ լինելով իրանական շուկայի կոնյունկտուրային և բնակչության պահանջմունքներին, նրանք ներմուծում կամ արտահանում էին այն ապրանքները, որոնց պահանջն այդ պահին ավելի էր զգացվում։ Օրինակ, 1900 թ. «Բեգլարյանց և Կարապետյանց» ընկերությունը Բանդար Գյազի վրայով Դամղան էր ներմուծել մոտ 10.000 փութ ռուսական ալյուր և վաճառել մեծ շահույթով[22]։

1891 թ. Թումանյանցների առևտրական տունը Շահրուդում Ջանսուղ Միրզայից, կալվածատերերից և գյուղացիներից գնել էր 5.000 խարվար հացահատիկ և արտահանել Աստրախան[23]։ Սա խոսում է հայ վաճառականների օպերատիվության և շուկայի պահանջմունքներին արագորեն հարմարվելու կարողության մասին։

Մյուս կողմից ուսումնասիրությունները մեզ հանգեցրել են այն եզրակացության, որ հայ առևտրական ընկերությունները տարիներ շարունակ մասնագիտացել էին որոշակի տեսակի ապրանքների ներմուծման և արտահանման մեջ։ Հյուսիս-արևելյան Իրանից դեպի Ռուսաստան նրանց արտահանման հիմնական ճյուղերն էին բամբակը, բուրդը, չոր միրգը, մետաքսահումքը և խոշոր եղջերավոր անասունները։ Ռուսաստանից ներմուծում էին հիմնականում շաքար, շաքարավազ, երկաթ և այլ մետաղներ, քիչ չափով կտորեղեն։

XIX դ. վերջին պարսկական և թուրքական ծագում ունեցող վաճառականներն աստիճանաբար հայ վաճառականներին դուրս մղեցին ներմուծման այնպիսի ճյուղերից, ինչպիսիք էին կտորեղենը և շաքարը։ Այսպես՝ Սարգևարում գործող վերոհիշյալ 7 հայ վաճառականներից միայն «Ղուլյանց և Ընկ.» առևտրական տունն էր ներմուծում ռուսական կտորեղեն, տարեկան մոտ 3000 փութ (մոտ 100.000 ռուբլու)[24]։

Հյուսիս-արևելյան Իրանում գործող հայկական խոշոր առևտրական տներից ևս երկուսը՝ «Տեր Մկրտիչ և եղբայրներ» և «Տեր-Սարգսյանց, Արուտչև և Գևորգյանց» առևտրական տները զգալի չափով զբաղվում էին կտորեղենի ներմուծմամբ։ 1908—09 թթ. Մեշհեդ ներմուծված 9000 հակ ռուսական բամբակյա կտորեղենից առաջինին բաժին էր ընկնում 1.500 հակ, իսկ երկրորդին՝ 2.000 հակ[25]։

Նույն թվականներին Մեշհեդ ներմուծված 937.250 ռուբ. շաքարից և շաքարավազից վերոհիշյալ առևտրական տներին բաժին էր ընկնում համապատասխանաբար 67.500 ռուբ. և 52.500 ռուբ.[6], այսինքն հայ վաճառականների տեսակարար կշիռը կազմում էր ընդամենը 13%։

Չնայած հայկական համարյա բոլոր առևտրական ընկերությունները զբաղվում էին և արտահանմամբ, և ներմուծմամբ, սակայն նրանց առևտրական գործարքներում վճռորոշը, առաջատարը արտահանումն էր և շատ հաճախ ներմուծումը ենթարկվում էր արտահանման շահերին։

Ներմուծելով ռուսաստանյան արտադրության ապրանքներ՝ հիմնականում շաքար և կտորեղեն, հայ առևտրական ընկերությունների ներկայացուցիչները միաժամանակ նախավճար էին տրամադրում հումքի անմիջական արտադրողներին։ Երբ գալիս էր նրանց վճարելու ժամանակը, նրանք իրենց ներմուծած ապրանքները հաճախ վաճառում էին շատ էժան, որպեսզի ժամանակին վճարեն իրանական արտադրողներին, համոզված լինելով, որ իրանական հումքը վաճառելիս վերադիրով կհատուցեն իրենց վնասները։ Ամենից հաճախ նախավճար տրամադրում էին բամբակ և մետաքս արտադրողներին։ Բամբակի դիմաց կնքվող վարկային գործարքներից, որոնք հայտնի էին «սալաֆ» անունով, Խորասանում տարածված էին երկու ձևեր՝ առաջին դեպքում արտադրողին տրված վարկի դիմաց վերցվում էր 12—15%, իսկ բամբակը հաշվվում էր նույն գնով, ինչով գնանշվել էր պայմանագրի կնքման ժամանակ, երկրորդ դեպքում՝ վարկի դիմաց տոկոս չէր վերցվում, բայց բամբակը գնահատվում էր 1 խարվար չմաքրված կամ 30 ման մաքրված բամբակի գնանշված արժեքից 5—10 ղրան էժան[27]։

Նախավճարը միշտ տրամադրվում էր որոշակի քանակությամբ բերքի դիմաց։ Շատ հաճախ հայ վաճառականները նախավճարը տրամադրում էին ոչ թե դրամով, այլ իրենց ներմուծած ապրանքներով։

Ինչպես ողջ Իրանում, այնպես էլ Խորասանում գերակշռում էր մանր ու միջին առևտրական կապիտալը։ Հայ վաճառականների զգալի մասն ևս ուներ սահմանափակ կապիտալ։ Միևնույն ժամանակ արդեն XIX դ. վերջին Հյուսիս-արևելյան Իրանում գործում էին այնպիսի խոշոր առևտրական ընկերություններ, ինչպիսիք էին Թումանյանցների, Տեր-Մկրտիչների առևտրական տները, «Նասիբյանց և Տեր-Պետրոսյանց», «Բեգլարյանց և Կարապետյանց» առևտրական ընկերությունները, վաճառականներ Փանյանցը, Մնացականովները, որոնց առևտրական շրջանառությունն անցնում էր մի քանի հարյուր հազար ռուբլուց։

Ընդհուպ մինչև Միջին Ասիայի միացումը Ռուսաստանին և Անդրկասպյան երկաթուղու կառուցումը (1880—1886) հայ վաճառականները Հյուսիս-արևելյան Իրանի հետ առևտուրը վարում էին հիմնականում Բանդար Դյազլի, Շահրուդի և Սարզևարի վրայով։ Պատահական չէ, որ առևտրական խոշոր ընկերությունների ներկայացուցիչները հաստատվել էին հենց այս առևտրական կենտրոններում։ Իրաղրությունը կտրուկ կերպով փոխվեց 80-ական թվականների կեսերից: Հյուսիս-արևելյան Իրանի հետ Ռուսաստանի առևտրում սկսեց վճռական դեր խաղալ Աշխարաղը։ Մի շարք խոշոր ընկերություններ, որոնք մինչ այդ գործում էին Անդրկովկասում, իրենց առևտրական գործարքները տեղափոխեցին Աշխաբադ։ Նրանցից մի քանիսն այնպիսի վճռական դիրքեր գրավեցին Հյուսիս-արևելյան Իրանի տնտեսական կյանքում, որ Սիսթանում ռուսական փոխ հյուպատոս Միլլերը 1900 թ. արքունական խորհրդական Ցեյդլերի միջոցով տեղեկություններ հայտնելով Սիսթանի առևտրի մասին, Տեր-Մկրտիչև և Մնացականով ընկերություններին հրավիրում էր առևտուր սկսելու Սիսթանում[28], իսկ Բիրջանդի վաճառականները ցանկություն էին հայտնում կապ հաստատել Տեր-Մկրտիչև ընկերության հետ կտորեղեն, շաքար, կերոսին, չուգունե իրեր ստանալու համար[29]։

Տեր-Մկրտիչև եղբայրները Աշխաբադում գործունեության 30 տարիների ընթացքում միայն ռուսական կտորեղենի առևտրից ավելի քան 2 մլն. ռուբլու շահույթ էին ստացել[30]։

XIX դ. վերջին XX դ. սկզբին Իրանն ավելի ու ավելի մեծ չափով էր ներքաշվում ապրանքադրամական հարաբերությունների ոլորտ, որի հետևանքը Ռուսաստանի և մյուս երկրների հետ առևտրի շեշտակի վերելքն էր։ Արտաքին առևտրի բուռն զարգացման հետևանքով նկատելի փոփոխություններ էին տեղի ունենում նաև Հյուսիս-արևելյան Իրանի դյուղատնտեսության մեջ։ Գյուղատնտեսական ավանդական կուլտուրաները (հացահատիկ և այլն) դուրս էին մղվում տեխնիկական կուլտուրաների կողմից, որոնք մեծ չափով արտահանվում էին։ Հյուսիս-արևելյան Իրանի արտահանման գլխավոր ճյուղերից մեկը դառնում է բամբակը։ Ռուսաստան արտահանվող իրանական բամբակի ավելի քան 40% տալիս էին Աստրաբադը և Խորասանը[31]։

Մինչև XIX դ. վերջը Ռուսաստան արտահանվող բամբակը մաքրվում էր ձեռքով և սեղմվում ձեռքի մամլիչներով։ Օրինակ XX դ. սկզբին Թորբաթե-Հեյդարիում կար ընդամենը 3 ձեռքի մամլիչ[32]։

XIX դ. վերջին XX դ. սկզբին բամբակի արտադրության և արտահանման շեշտակի վերելքը նոր պահանջներ էր դնում իրանական բամբակ արտահանողների առջև։ Չմաքրված բամբակի արտահանումը Ռուսաստան տնտեսապես ձեռնտու չէր, իսկ բամբակի մաքրումը և մամլումը նախկին մեթոդներով շարունակելն արդեն անհնարին էր։

Այդ էր պատճառը, որ XIX դ. վերջից նախ Մազանդարանում, իսկ ապա Աստրաբադում և Խորասանում հանդես եկան առաջին բամբակազտիչ գործարանները։ Եվ քանի որ բամբակի արտահանումը գտնվում էր գերազանցապես հայ վաճառականների ձեռքում, բնականաբար, այդ գործարանների մեծ մասը ևս պատկանում էր նրանց։ Մյուս կողմից պարսիկ վաճառականները խուսափում էին իրենց կապիտալները ներդնել արդյունաբերության մեջ և հաճախ թաքցնում էին իրենց առևտրական շրջանառությունը, վախենալով իշխանությունների կամայականություններից։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Իրանում գործում էին ավելի քան 25 բամբակազտիչ գործարաններ, որոնց ճնշող մասը գտնվում էր Խորասանում և Մազանդարանում։ Դրանք հիմնականում կառուցվում էին բամբակագործության խոշոր կենտրոններում, որտեղ հաստատվել էին իրանական բամբակի գլխավոր արտահանողները։ Օրինակ. Նիշաբուրում գործում էին 4 բամբակազտիչ գործարաններ, որոնք պատկանում էին Պոզնանսկու բաժնետիրական ընկերությանը, Տեր-Մկրտիչև, «Հախնազարյանց և Ընկ.» և «Խալափյանց և Ընկ.» առևտրական տներին[33]։

Սաբզևարում նույնպես գործում էին 4 բամբակազտիչ գործարաններ, որոնցից երկուսը պատկանում էին Տեր-Մկրտիչևներին և Հախնազարյանցին։ Այդ գործարաններից յուրաքանչյուրի կառուցումը նստել էր 40—50 հազար ռուբլի[34]։ Եվ Սաբզևարում, և Նիշաբուրում Տեր-Մկրտիչևների գործարանները համարվում էին լավագույններից մեկը։ Դրանք կահավորված էին ժամանակակից սարքավորումներով և գնահատվում էին 80—90 հազար ռուբլի[35]։

Այս բնագավառում խոշորագույն ձեռնարկատերերից մեկը «Աթայանց և Ընկ.» առևտրական տունն էր։ 1909 թ. Մամեդաբադում գործում էր Աթայանցների բամբակազտիչ գործարանը։ Գործարանի սարքավորումների վրա ծախսվել էր 7000 թուման։ Հիմնական և շրջանառու կապիտալը կազմում էր 15.000 թուման[36]։ Ընկերությունը գործարաններ ուներ նաև Միանաբադում, Դերեգեզում, Ջովեյնում և Բոջնուրդյան խանությունում։ 1916 թ. Բոջնուրդյան խանությունում

շարք մտավ ընկերությանը պատկանող խոշոր բամբակազտիչ գործարանը, իսկ հին գործարանի իր բաժինն Աթայանցը 16 հազար թումանով վաճառեց Բոշնուրդյան խանին[37]։

«Աթայանց և Ընկ.» առևտրական տունը լայն գործունեություն էր ծավալել Սաբզևարի շրջանում։ Զգտելով ընդլայնել առևտրական գործարքները և ավելացնել զտված բամբակի արտահանումը Ռուսաստան, առևտրական տունը 1915 թ. նոր գործարան կառուցեց Սաբզևարի շրջանում՝ Ջովեյնում։ Ընկերության ղեկավարության դարձիքով նոր գործարանի գործարկումը հնարավորություն կտար այդ շրջանից Ռուսաստան արտահանել տարեկան ավելի քան 50.000 փութ մաքուր բամբակաթել[38]։ Գործարանը լավագույններից մեկն էր Իրանում և հագեցված էր ժամանակակից սարքավորումներով։ Հաշվա-վարկային բանկի աստիճանավորների գնահատմամբ այն արժեր մոտ 75 հազար ռուբլի[39]։

Բամբակի արտադրության մյուս խոշոր կենտրոնը Աստրաբադն էր։ XX դարասկզբին Բանդար Գյազում գործում էին 4 բամբակազտիչ գործարաններ, որոնք պատկանում էին «Բեգլարյանց և Կարապետյանց», «Նասիբյանց և Տեր-Պետրոսյանց» ընկերություններին, վաճառական Աղամիրզայանցին[40] և Թումանյանցների առևտրական տանը[41]։

Կայեմի վկայությամբ Բանդար Գյազում բամբակի առևտուրը գտնվում էր հիմնականում առաջին երկու ընկերությունների ձեռքում, որոնք օգտվելով իրենց մենաշնորհ դիրքից, հաճախ հումքը գնում էին ափազանց էժան գնով։ Նույն հեղինակի տվյալներով գործարանատերերից յուրաքանչյուրին հումքի թերակշռման հետևանքով մնում էր 7—12 հազար փութ մաքուր մանրաթել, որն անշուշտ չափազանցություն է[42]։

Այս, ինչպես նաև մյուս գործարանները սեզոնային էին։ Աշխատում էին տարեկան 2—3 ամիս, հիմնականում գործարանատերերին պատկանող հումքով։ Սակայն հաճախ ձեռնարկատերերը զտելու նպատակով որոշակի վճարի դիմաց հումք էին ընդունում նաև տեղական բնակչությունից և մյուս արտահանողներից։ Օրինակ, Մամեղաբադում գտնվող Աթայանցների գործարանը մասնավոր անձանցից զտելու համար ընդունում էր տարեկան 1500—2000 փութ բամբակ, 1 փութ մանրաթելի համար 4 ղրան վճարով[43]։

Ընդհանուր առմամբ գործարանների թողունակությունն այնքան էլ մեծ չէր։ Մամեղաբադի գործարանի արտադրական կարողությունը օրական 400 փութ էր, սեզոնայինը՝ 35 հազ. փութ, Լյութֆարադինը՝ 20 հազար փութ[44]։ Որպես կանոն, այդ գործարանները չունեին ինք-

նուրույն տնտեսական նշանակություն և կոչված էին նպաստելու այս կամ այն ընկերության առևտրական շրջանառության ընդլայնմանը։

Բամբակազտիչ գործարանների հանդես գալը Իրանում այդ երկրի բամբակագործության մեջ օտարերկրյա կապիտալի ինտենսիվ ներթափանցման արդյունք էր։ Ձեռնարկությունների մեծ մասը պատկանում էր բամբակի առևտրում կարևոր դիրքեր նվաճած ռուսա՝պատակ հայերի առևտրական ընկերություններին։ Անշուշտ, դրանք փոքր ձեռնարկություններ էին, բայց լինելով իրանական արդյունաբերության սպեցիֆիկ ճյուղի ձեռնարկություններ չէին զգում Իրանից դուրս գործող օտարերկրյա կապիտալի կործանարար մրցակցությունը։

Հայ ձեռնարկատերերը մենաշնորհ դիրք էին գրավում Իրանի ձկնարդյունաբերության մեջ։ Դեռս XVIII դարավերջին XIX դարասկզբին Կասպից ծովի հարավային ափի ձկնային հարստությունները գրավել էին աստրախանցի հայ վաճառականների ուշադրությունը։ Սակայն ձկնարդյունաբերությունը Կասպից ծովի հարավում լայն հիմքի վրա դրվեց միայն 1873 թ., երբ աստրախանցի առաջին դիլդիայի վաճառական Ստեփան Լիանոզովը շահական կառավարությունից ստացավ Աստրայից-Ատրեկ հատվածում ձկնորսության մենաշնորհ իրավունք։ Այդ ժամանակից սկսած ձկան որսը և արտահանումն անշեղորեն աճեց։ Եթե 1890-ական թվականների սկզբին ձկան որսն այդ շրջանում հասնում էր տարեկան միջին հաշվով մոտ 600.000 ռուբլու, ապա 1890—1906 թթ.՝ 900.000—1.000.000 ռուբլու, իսկ 1907—1913 թթ.՝ 2,5 մլն. ռուբլու[45]։

Լիանոզովը և նրա հաջորդները զգալի կապիտալներ ներդրեցին ստեղծելով ժամանակակից ձկնարդյունաբերական ձեռնարկություն՝ հզոր սարքավորումներով, սառնարաններով, ժամանակակից փոխադրանավերով, կահավորված նավակայաններով, պահեստներով և այլ օժանդակ շինություններով։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Լիանոզովների ընկերության կապիտալ ներդրումները կազմում էին 3.380.000 ֆրանկ[46]։

Մեկ ուրիշ հետազոտողի՝ Յագանեգիի տվյալներով 1916 թ. դրա՛ք հասնում էին 9000000 ռուբլու[47]։

Այդ վիթխարի ձեռնարկության ձկնորսարանների մի մասն էլ գտնվում էր Աստրաբագի շրջանում։ Գլխավոր ձկնորսարանները գտնվում էին Կարասուի և Հաջի Նեֆեսի գետաբերաններում։ Ընկերությունն այստեղ որսը կատարում էր տեղաբնակ թուրքմենների ուժերով, նախօրոք պայմանագիր կնքելով նրանց հետ։ Ձկնորսարանների

արտադրանքը տարեցտարի ավելանում էր։ 1909—14 թթ. միջին հաշվով ձկան որսն Աստրաբադի շրջանում կազմել էր մոտ 557.000 ռուբլի[48]։

Եթե 1905 թ. ձկան արտահանումը Բանդար Գյազի վրայով կազմում էր ընդամենը 13.749 փութ, ապա 1911 թ. հասնում էր 401.500 փթի[49]։

Ինչպես և մյուս ձկնորսարաններում, Աստրաբադում ևս ընկերությունը զգալի կապիտալ ներդրումներ էր կատարում։ Ընկերության կարիքների համար Կարասուում գործում էին էլեկտրական, հիվանդանոց ամբուլատորիայով, կառուցվել էին բարաքներ աշխատողների համար, դցվել էին ռելսեր վագոնների համար։

Այսպիսով, XIX դարավերջին XX դարասկզբին հայ վաճառականները ակտիվ դեր էին խաղում Հյուսիս-արևելյան Իրանի տնտեսական կյանքում։ Գերազանցապես նրանց ձեռքում էր գտնվում այնպիսի ապրանքների արտահանումը, ինչպիսիք էին բամբակը, բուրդը, շոր մորդը, մետաքսահումքը։ Հայ վաճառականները նշանակալի դերքեր էին գրավել նաև շաքարի, երկաթի, գործվածքեղենի, թորած նավթի ներմուծման մեջ։ Երկրի ներսում նրանք հիմնականում զբաղվում էին մեծածախ առևտրով։

Հայ վաճառականների ձեռքում էին գտնվում նաև Հյուսիս-արևելյան Իրանի սաղմնավորվող արդյունաբերության հիմնական ճյուղերը՝ բամբակի զտման գործը և ձկնարդյունաբերությունը։

С. Х. СТЕПАНЯН

АРМЯНСКОЕ КУПЕЧЕСТВО В СЕВЕРО-ВОСТОЧНОМ ИРАНЕ В КОНЦЕ XIX НАЧАЛЕ XX ВЕКОВ

Резюме

В конце XIX начале XX вв. армянское купечество играло важную роль во всех сферах экономической жизни Северо-восточного Ирана. Установив тесные связи с непосредственными производителями иранского сырья, армянские купцы экспортировали из Северо-восточного Ирана в Россию хлопок, шерсть, шелк, сухофрукты. В то же время крупные армянские торговые дома и товарищества ввозили в Северо-восточный Иран русскую мануфактуру, сахар, железо, керосин.

До закрытия в 1883 году закавказского транзита, армянские купцы ввозили в этот район в основном западноевропейские товары, покупая эти товары через посредников в Тифлисе. После

закрытия транзита, они переориентировались на российскую промышленность

В руках армянских крупных купцов находились также основные отрасли зарождавшейся промышленности Северо-восточного Ирана: строительство хлопкоочистительных заводов и рыбная промышленность.

1 Н. А. Кузнецова, Иран в первой половине XIX века, М., 1983, с. 185—186.
2 Ф. Бакулин, Очерки торговли с Персией. Азербайджан, Мазандеран, Астрабад, СПб., 1875, с. 93.
3 П. Огородников, Очерки Персии, СПб, 1878, с. 64.
4 Հայ վաճառականները մեծ քանակությամբ դրամ էին ներմուծում Իրան, որպեսզի իրանական հումքի արտադրողներին վճարեն կանխիկ դրամով։
5 ЦГИА Гр. ССР, ф. 378, оп. 1, д. 11061, л. 74 об.
6 Նույն տեղում, թ. 101։
7 Նույն տեղում, թ. 73։
8 П. Огородников, Очерки Персии, СПб., 1878, с. 103.
9 Նույն տեղում, էջ 63, 358։
10 АВПР, ф. «Персидский стол», д. 1826, 1883—88 гг., л. 127 об.
11 Л. К. Артамонов, Поездка в Персию. Астрабад-Шахурдский район и Северный Хорасан, Тифлис, 1894, приложение, с. 55.
12 Նույն տեղում, էջ 52։
13 Ф. Баумгартен, Поездка по восточной Персии Л-гв Волынского полка поручика Баумгартена в 1894 г., СПб., 1896, с. 54—55.
14 Л. К. Артамонов, Астрабад-Шахурский район..., с. 225.
15 ЦГИА СССР, ф. 23, оп. 7, д. 183, лл. 69—70 об.
16 Նույն տեղում, թ. 70։
17 G. N. Curzon, Persia and the Persian Question, London, Longmans, Green and Co., 1892, v. 2, p. 510.
18 Бендерев, Астрабад-Бастамский район Персии. Поездка по району в 1902 г. Ашхабад, 1904, маршруты, с. 135.
19 Նույն տեղում, էջ 158։
20 Նույն տեղում, էջ 3։
21 Л. К. Артамонов, Астрабад-Шахурдский район..., ч. 2, с. 101.
22 Бендерев, Астрабад-Бастамский район Персии..., с. 247.
23 Л. К. Артамонов, Астрабад-Шахурдский район..., ч. 2, приложение, с. 58.
24 ЦГИА СССР, ф. 23, оп. 7, д. 183, л. 69.
25 ЦГИА СССР, ф. 600, оп. 10, д. 222, л. 43.
26 Նույն տեղում, թ. 36 հակ. կողմը։
27 А. Иас, Хлопководство в Хорасане. Сборник консульских донесений, вып. 5, СПб., 1905, с. 350.

28 АВПР, ф. «Среднеазиатский стол», оп. 485, д. 718, лл. 164—165.
29 АВПР, ф. Среднеазиатский стол, оп. 485, д. 720, л. 5.
30 А. Ф. Губаревич-Радобыльский, Значение Туркестана в торговле России с сопредельными странами в Азии, СПб, 1912, с. 203.
31 Библиотека хлопкового дела, кн. 10, М., 1928, с. 26—28.
32 А. Иас, Хлопководство в Хорасане, с. 350—351.
33 Ж. Я. Кассис, Экономическое положение современной Персии, Киев, 1915, с. 26.
34 Նույն տեղում։
35 ЦГИА СССР, ф. 600, оп. 9, д. 990. 1915, л. 4.
36 Сборник консульских докладов (Северная Персия), М., 1933, с. 23.
37 ЦГИА СССР, ф. 600, оп. 10, д. 202, л. 4. ф. 600, оп.9, д. 1083, л. 15.
38 ЦГИА СССР, ф. 600, оп. 9, д. 1083, л. 7.
39 Նույն տեղում, թ. 16։
40 Н. Н. Шавров, Персидское побережье Каспийского моря, его производительность и торговля, Тифлис, 1913, с. 71; А. М. Сахаров, Русская колонизация Астрабадской провинции в Персии, П., 1915, с. 46.
41 В. Б. Безсонов, Северные провинции Персии, П., 1917, с. 43.
42 Г. Каэм, «Персидские земли» или «Новая апельсиния», Красноводск, 1914, с. 109.
43 Сборник консульских докладов, с. 23.
44 Նույն տեղում։
45 M. L. Entner, Russo-Persian Commersial Relations 1828--1914, University of Florida Monographs, Social Saimces, no. 28, Florida, University of Florida Press, 1965, p. 77.
46 The Economic History of Iran 1800—1914, Ed. by Ch. Issawi, Chicago—London, The University of Chicago Press, 1971, p. 256.
47 E. B. Yaganegi, Recent Financial and Monetary History of Persia, New—York, Columbia University, 1934, p. 21.
48 А. Ф. Невраев, Южное побережье Каспия, Труды научного института рыбного хозяйства, т. 4, М., 1929, с. 381.
49 Н. Н. Шавров, Персидское побережье Каспийского моря..., с. 69—70.